# Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի, Կանաչուտի, Դեղձուտի միջնակարգ դպրոցներ»-ի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» -ում՝ 2021թվականի դեկտեմբերի 16 -ից մինչև 2022թ. հունվարի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը16:00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թվականի հունվարի 21-ին՝ ժամը 14:00-ին,
ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցում

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ.Դեղձուտ Ճիրազի 43

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝
098-08-65-19, 098-48-51-12